ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/324/2024

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 12 նոյեմբերի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող) Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024 թվականի նոյեմբերի 12-ին քննելով «ԲԱՍ ՎՈՅԱԺ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) տնօրեն Արսեն Բաղդագյուլյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/324/2024 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Տ

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.1-ին հոդվածով վերապահված գործառույթը, ինչպես նաև հիմք ընդունելով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) 2023 թվականի տարեկան հաշվետվության (այսուհետ՝ Տարեկան հաշվետվություն) ստուգման արդյունքում վերհանված տվյալները, պարզել է, որ «ԲԱՍ ՎՈՅԱԺ» ՍՊ

ընկերության անունից Կուսակցությանը կատարվել է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 24-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված չթույլատրված նվիրատվություն, այն է՝

Ընկերության անունից 2023 թվականի ընթացքում Կուսակցության բանկային հաշվին կատարվել է փոխանցում՝ 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Վերոգրյալը հայտնաբերվել է նաև Աուդիտորական եզրակացությամբ:

1.2 Վերոնշյալ խախտման հայտնաբերմամբ պայմանավորված՝ Հանձնաժողովը 2024 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 01/2947-2024 գրությամբ Արսեն Բաղդագյուլյանին է ուղարկել ծանուցում՝ իրավաբանական անձի անունից Կուսակցությանը նվիրատվություն կատարելու զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման վերաբերյալ՝ հրավիրելով վերջինիս Հանձնաժողով՝ ծանուցումը ստանալուն հաջորդող 7-րդ աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ին՝ մասնակցելու Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն (այսուհետ՝ նաև Արձանագրություն) կազմելուն: Արսեն Բաղդագյուլյանի կողմից նշված գրությունը ստացվել է 2024 թվականի սեպտեմբերի 23-ին:

1.3 2024 թվականի սեպտեմբերի 30-ին Ընկերության տնօրեն Արսեն Բաղդագյուլյանի ներկայացուցչի (այսուհետ նաև՝ Ներկայացուցիչ) կողմից միջնորդություն է ներկայացվել Արձանագրության կազմման օրը՝ 2024 թվականի հոկտեմբերի 4-ին տեղափոխելու վերաբերյալ, միաժամանակ խնդրելով տրամադրել հարուցված վարչական վարույթի նյութերի պատճենները: Բացի այդ Ներկայացուցիչը հայտնել է նաև, որ գործի նյութերին ծանոթանալուց հետո առաջիկայում կներկայացվեն համապատասխան պարզաբանումներ:

1.4 Նշված միջնորդությունը բավարարվել է Հանձնաժողովի կողմից և Հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 01/3182-2024 գրությամբ Ներկայացուցչին ուղարկվել է ծանուցում հրավիրելով՝ 2024 թվականի հոկտեմբերի 4-ին Արձանագրություն կազմելուն, միաժամանակ, կից ներկայացնելով պահանջվող փաստաթղթերը:

1.5 2024 թվականի հոկտեմբերի 4-ին պատշաճ ծանուցված Ներկայացուցչի մասնակցությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/673/2024 արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.6 2024 թվականի հոկտեմբերի 15-ին Ներկայացուցիչը Հանձնաժողով մուտքագրված թիվ Մ-4484-2024 գրությամբ խնդրել է տրամադրել վարչական վարույթ հարուցելու և վարչական վարույթի ժամկետը երկարացնելու մասին Հանձնաժողովի որոշումները:

1.7 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 01/3348-2024 գրությամբ Արսեն Բաղդագյուլյանին է ուղարկվել 2024 թվականի նոյեմբերի 1-ին՝ ժամը՝ 16:30-ին նշանակված, Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին ծանուցագիր, կից ներկայացնելով Հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 13-ի նիստի արձանագրությունը, որի 5-րդ կետի համաձայն՝ Կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվության ստուգման արդյունքների մասին արձանագրության 4-րդ կետով հայտնաբերված՝ իրավաբանական անձանց անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելու դեպքերի առթիվ Հանձնաժողովի կողմից հարուցվել են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներ: Նշված գրությամբ միաժամանակ նշվել է, որ վկայակոչված արձանագրությունը տրամադրվել է վարույթի մասնակցին Հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 01/3182-2024 գրությամբ:

1.8 Նշանակված օրը և ժամին, Արսեն Բաղդագյուլյանի բացակայությամբ, թիվ ՎԻՎ/324/2024 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի կապակցությամբ անցկացվել է Հանձնաժողովի նիստ: Հաշվի առնելով, որ ՎԻՎ/324/2024 գործով նշանակված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրվա և ժամի (2024 թվականի նոյեմբերի 1-ին՝ ժամը՝ 16:30) դրությամբ Հանձնաժողովում առկա չէր վարույթի մասնակցի կողմից գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված լինելը հավաստող ապացույց (փոստային ծանուցագիրը ստացած լինելը հավաստող փոստային հետադարձ առաքանին), Հանձնաժողովն արձանագրել է, որ իրավասու չէ թիվ ՎԻՎ/324/2024 գործի քննությունն իրականացնել վարույթի մասնակցի բացակայությամբ՝ հաշվի առնելով Օրենսգրքի 267-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումն առ այն, որ գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի

քննությունը հետաձգելու մասին: Նիստի ընթացքում Հանձնաժողովը, հիմք ընդունելով վերոնշյալ հանգամանքը թիվ ՎԻՎ/324/2024-1 որոշմամբ կասեցրել է թիվ ՎԻՎ/324/2024 գործի վարույթը:

1.9 2024 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 01/3504-2024 գրությամբ վարույթի մասնակցին է ուղարկվել 2024 թվականի նոյեմբերի 12-ին՝ ժամը՝ 16:00-ին նշանակված, Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին ծանուցագիր:

1.10 Հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 01/3348-2024 գրությունն ուղարկելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողովը չի ստացել առաքանու հանձնման հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), ուստի, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 14-15-րդ մասերի դրույթները՝ 2024 թվականի նոյեմբերի 12-ին գործի քննության տեղի և ժամի մասին ծանուցագիրը տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների https://www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքում (հրապարակային ծանուցման նույնականացման համար՝ 1576831)՝ հրավիրելով վարույթի մասնակցին ներկայանալու Հանձնաժողով՝ 2024 թվականի նոյեմբերի 12-ին, ժամը՝ 16:00-ին նշանակված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը: Միաժամանակ, նույն ծանուցագիրը 2024 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 01/3528-2024 գրությամբ ուղարկվել է համապատասխան համայնքի ղեկավարին: Նշված գործողությունները կատարելուց հետո՝ հինգերորդ օրը ծանուցումն օրենքով սահմանված կարգով համարվել է հանձնված (ստացված):

1.11 Հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 4-ի՝ 2024 թվականի նոյեմբերի 12-ին՝ ժամը՝ 16:00-ին նշանակված, Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին թիվ 01/3504-2024 գրությունը վարույթի մասնակցի (ներկայացուցչի) կողմից ստացվել է 2024 թվականի նոյեմբերի 6-ին:

1.12 Հանձնաժողովն արձանագրելով, որ վերացել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի կասեցումն առաջացրած հանգամանքը և հիմք ընդունելով

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթն առ այն, որ վարչական վարույթը ***վերսկսվում է դրա կասեցման հիմք*** դարձած հանգամանքները վերանալուց հետո, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը, 2024 թվականի նոյեմբերի 12-ին թիվ ՎԻՎ/324/2024 վարչական գործով հրավիրված նիստով վերսկսել է գործի վարույթը: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Արսեն Բաղդագյուլյանի ներկայացուցչի մասնակցությամբ 2024 թվականի նոյեմբերի 12-ին՝ ժամը 16:00-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/324/2024 վարչական վարույթի շրջանակներում արձանագրված առերևույթ իրավախախտման առնչությամբ 2024 թվականի նոյեմբերի 12-ին գործի քննության ընթացքում Ներկայացուցիչը ներկայացրել է դիրքորոշում (այսուհետ՝ Դիրքորոշում) առ այն, որ անհրաժեշտ է սույն վարչական գործի վարույթը կարճել՝ հիմք ընդունելով հետևյալ հանգամանքները.

1. Արձանագրված իրավախախտման առնչությամբ նախաձեռնված վարույթի հարուցման օր պետք է դիտարկել Կուսակցության կողմից ներկայացված փաստաթղթերի ստացման օրը, հետևաբար, սույն գործով վարչական պատասխանատվության կիրառման վաղեմության ժամկետները սպառվել են: Արձանագրված իրավախախտման առնչությամբ հարուցված վարույթի նախաձեռնման ելակետային օր պետք է համարել համապատասխան փաստաթղթերը Հանձնաժողովի տիրապետման ներքո գտնվելու օրվանից: Ընդ որում, վերջինիս պնդմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը հարուցված է եղել առնվազն 2024 թվականի սեպտեմբերի 12-ի դրությամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2024 թվականի սեպտեմբերի 13-ին Հանձնաժողովն արդեն իսկ կայացրել է ընթացակարգային որոշում: Բացի այդ, Ներկայացուցիչը հավելեց նաև, որ այն հանգամանքի հաշվառմամբ, որ Հանձնաժողովը գնահատող մարմին է, այլ ոչ թե ստուգող և ունի սահմանափակ ներուժ և ռեսուրսներ, առավել նպատակահարմար

կլիներ Կուսակցության կողմից ներկայացված հաշվետվությունը ստուգելու նպատակով ուղարկել հաշվապահական փորձաքննության, որի արդյունքների հիման վրա էլ իրականացնել հետագա գործողություններ: Վերոնշյալի համատեքստում հավելեց նաև, որ սույն դեպքում Հանձնաժողովը սեղմ ժամկետներում կավարտեր ստուգման գործընթացը և կխուսափեր ընթացակարգային խախտումներից:

2. Վկայակոչելով ՀՀ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումն առ այն, որ բանկային հաշվի քաղվածքը չի հանդիսանում գումարի փոխանցման փաստը վկայող ուղիղ ապացույց, Ներկայացուցիչը նշեց, որ Արսեն Բաղդագյուլյանին վերագրվող՝ Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումն առհասարակ առկա չէ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ արարքի կատարման մասին վկայող պատշաճ ապացույց գործի նյութերում առկա չէ: Վերջինիս պնդմամբ նման ապացույց կարող է հանդիսանալ միայն կոնկրետ անձի կողմից կատարված փոխանցման գործարքի անդորրագիրը:

Միաժամանակ, նշելով Ընկերության տնօրեն (Ներկայացուցչի վկայակոչմամբ) Գևորգ Մանուկյանին լսելու անհրաժեշտությունը՝ միջնորդեց որպես վարույթի մասնակից լսել նաև վերջինիս:

Նիստը նախագահողի (Մարիամ Գալստյան) հարցին՝ թե վերջինս առարկում է արդյոք Ընկերության կողմից քննարկվող գումարը որպես նվիրատվություն Կուսակցությանը փոխանցելու փաստի առնչությամբ և որն է վերջինիս կողմից ներկայացված միջնորդության նպատակը, վերջինս պատասխանեց, որ Ընկերության կողմից Կուսակցությանը նշված գումարի փաստացի փոխանցման վերաբերյալ գործի նյութերում որևէ ուղիղ ապացույց առկա չէ, հետևաբար առկա չէ իրավախախտում, ինչպես նաև դիտավորություն: Բացի այդ, վերջինիս պնդմամբ ենթադրյալ խախտումը չէր կարող տեղի ունենալ, այն հիմնավորմամբ, որ փոխանցումը կկատարվեր որևէ ֆիզիկական անձի անունից (բանկոմատով մուտքագրելու միջոցով), ուստի, պնդելով, որ խախտում առկա չէ, և չբացառելով որևէ թյուրիմացության առկայությունը՝ գտնում է, որ անհրաժեշտ է ուսումնասիրել բոլոր հնարավոր տարբերակները: Միաժամանակ, վերջինս նշեց նաև, որ պարզապես ցանկանում է, որպեսզի Գևորգ Մանուկյանը նույնպես մասնակցի վարչական լսումներին:

Նիստը նախագահողի այն հարցին, թե արդյոք Գևորգ Մանուկյանը պետք է ներկայացնի նոր՝ ներկայացուցչի դիրքորոշումից տարբերվող դիրքորոշում, Ալեքսանդր Սիրունյանը պատասխանեց, որ ոչ, դիրքորոշումը նույնն է լինելու:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/324/2024 գործում առկա նյութերը, Կուսակցության Տարեկան հաշվետվությամբ ներկայացված տվյալները՝ համադրելով դրանք Կուսակցության բանկային հաշիվների քաղվածքների հետ և հաշվի առնելով Աուդիտորական եզրակացությամբ հայտնաբերված առերևույթ խախտումները՝ կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 2023 թվականի ընթացքում «ԲԱՍ ՎՈՅԱԺ» ՍՊ ընկերության անունից Կուսակցությանը կատարվել է 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով նվիրատվություն (չթույլատրված նվիրատվություն):

3.2 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Արսեն Բաղդագյուլյանը հաշվետու ժամանակահատվածում (07.09.2016թ.-ից առ այսօր) հանդիսացել է Ընկերության տնօրեն:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներն են՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում և կարգով կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը, ներառյալ՝ կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների (այսուհետ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվություններ) ներկայացման պահանջների պահպանման և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգումը:

4.2 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը ստուգում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանումը և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը:

4.3 Սահմանադրական օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը, ներառյալ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվության ստուգումն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն օրենքով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով:

4.4 Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կուսակցություններն իրավունք ունեն գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների, ներառյալ՝ փոխառությունների, երրորդ անձի կողմից կուսակցության պարտքը մարելու, պարտատիրոջ կողմից կուսակցության պարտքը ներելու, ինչպես նաև կուսակցության օգտին կատարվող այլ գործունեության տեսքով նվիրատվություններ ստանալու ֆիզիկական անձանցից, **բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:**

4.5 Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1.1-ին մասի համաձայն՝ նվիրատվություն են համարվում նաև կուսակցության օգտին անհատույց աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը, կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցումը, օգտագործման հանձնումը կամ նույն կամ համանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գործող շուկայական արժեքից էականորեն ցածր գնով կուսակցության օգտին աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման կամ կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցման կամ վարձակալության հանձնելու հետևանքով կուսակցության մոտ ձևավորված խնայողությունը (բնեղենով նվիրատվությունը): Գործող շուկայական արժեքից տարբերվող գինը համարվում է էականորեն ցածր, եթե այն գործող շուկայական արժեքից տարբերվում է նվազագույնը քսան տոկոսը գերազանցող չափով:

4.6 Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նվիրատվություններ չեն թույլատրվում՝ (…), **ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից,** այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձանցից և միջազգային կազմակերպություններից, (…):

4.7 Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելը**՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվիրատվության գումարի չափով:

4.8 Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ:

4.9 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենսգրքի 166.1-ին, 169.28-րդ, 169.31-րդ, 189.13-րդ, 189.14-րդ, 189.15-րդ, 189.16-րդ, 189.19-189.24-րդ, 206.14-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական

իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.12 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ եթե անձը հրաժարվել է ստանալ փոստային առաքանին, կամ կողմի նշած հասցեով ուղարկված փոստային առաքանին վերադարձվել է, կամ պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում ուղարկվելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, վարչական մարմինը չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), կամ վարչական վարույթի մասնակցի հասցեն անհայտ է, ապա ծանուցումն ուղարկվում է՝ աշխատանքի վայրի հասցեով (վարչական վարույթի նյութերում դրա առկայության դեպքում) և անձի վերջին հայտնի բնակության վայրի համապատասխան համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարին (բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական վարույթը հարուցվել է համայնքի կողմից), իսկ վարչական վարույթում ֆիզիկական անձի այլ հասցեների, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի վերաբերյալ տվյալների առկայության դեպքում՝ այդ հասցեներով:

4.13 Նույն հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 14-րդ մասով սահմանված գործողությունները կատարելու հետ միաժամանակ ծանուցումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Սույն մասով նախատեսված գործողությունները կատարելուց հետո՝ հինգերորդ օրը, համապատասխան ծանուցումները համարվում են հանձնված (ստացված):

4.14 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.15 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր

հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.16 Օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է հետևյալ հարցերը՝

1) տվյալ գործի քննությունը վերաբերում է, արդյոք, իր իրավասությանը.

2) ճիշտ են կազմվել, արդյոք, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը.

3) գործի քննությանը մասնակցող անձինք ծանուցվել են, արդյոք, դրա քննության ժամանակի և տեղի մասին.

4) պահանջվել են, արդյոք, անհրաժեշտ լրացուցիչ նյութեր.

5) վարչական պատասխանատվության ենթարկվող անձի, տուժողի, օրինական ներկայացուցիչների, փաստաբանի միջնորդությունների մասին:

4.17 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դրույթը նպատակ է հետապնդում ապահովել հաշվետու տարվա ընթացքում Կուսակցության ֆինանսական միջոցների և ծախսերի վերաբերյալ հանրային հաշվետվողականությունն ու հրապարակայնությունը, կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը, ինչպես նաև **բոլոր կուսակցությունների համար հավասար հնարավորությունների և կուսակցությունների ֆինանսական խոցելիության նվազեցման երաշխիքների ապահովումը**: Ցանկացած տեսակի իրավաբանական

անձանցից մուտքերը սահմանափակելով՝ Օրենսդիրը նպատակ է ունեցել բացառել քաղաքականության մեջ բիզնեսի հնարավոր ազդեցությունները: Այս առումով, իրավաբանական անձանց կողմից նվիրատվությունների, այդ թվում՝ բնեղենով նվիրատվությունների արգելքն արդյունավետ միջոց է բիզնեսի ազդեցությունը քաղաքականության վրա սահմանափակելու համար: Որոշակի խմբային կամ կորպորատիվ շահերից կուսակցությունների կախվածությունը բացառելու նպատակով Օրենսդիրը սահմանել է ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից նվիրատվությունների արգելք, այդ թվում՝ օտարերկյա իրավաբանական անձանցից և միջազգային կազմակերպություններից:

Հարկ է ընդգծել, որ Օրենսդրի կողմից նման կարգավորումների՝ Սահմանադրական օրենքով ամրագրումն ինքնանպատակ չէ և միտված է կարգավորելու կուսակցությունների մուտքերը՝ կանխելու կուսակցությունների կախվածությունը ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից, նպաստելու կուսակցությունների միջև ավելի հավասար պայմանների ապահովմանը, սահմանափակելու կուսակցությունների վրա անտեղի ազդեցությունը, խթանելով արդարությունը և նվազեցնելով կոռուպցիայի ռիսկը, իսկ իրավաբանական անձանցից նվիրատվությունների անմիջական արգելքի միջոցով Օրենսդիրը նպատակ է ունեցել նպաստել քաղաքական ֆինանսավորման հաշվետվողականությանն ու հրապարակայնությանը: Նման կարգավորումների պայմաններում սահմանափակվում են իրավաբանական անձանց ներդրումները, ինչը խթանում է քաղաքական գործընթացներում լայն հասարակության ավելի մեծ ներգրավվածությունը և մասնակցությունը: Ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից կուսակցություններին նվիրատվություններ կատարելն օրենսդրությամբ արգելելու հիմքում դրված է քաղաքական գործընթացների վրա իրավաբանական անձանց ազդեցությունը չեզոքացնելու օրենսդրի նպատակը, քանի որ իրավաբանական անձինք հաճախ ունենում են զգալի ֆինանսական ռեսուրսներ, որոնք քաղաքականության մեջ օգտագործվելիս հանրային շահի փոխարեն հանգեցնում են այդ կազմակերպությունների շահերի սպասարկմանը: Բացի այդ, վերը նշված կարգավորման արդյունքում ապահովվում է, որ կուսակցություններն ավելի շատ ակնկալեն անհատների՝ ֆիզիկական անձանց

աջակցությանը, ինչն ենթադրում է հանրության աջակցություն կուսակցության վարած քաղաքականությանը կամ գաղափարախոսությանը: Մյուս կողմից, վերը նշված արգելքների բացակայության պայմաններում հասարակությունն ընկալում է, որ կուսակցությունները մեծապես ֆինանսավորվում են իրավաբանական անձանց կողմից, ինչն էլ, իր հերթին, կարող է խաթարել վստահությունը քաղաքական համակարգի նկատմամբ:

Միաժամանակ, իրավաբանական անձանց կողմից նվիրատվությունները կարող են հանգեցնել արտոնյալ վերաբերմունքի կամ քաղաքական որոշումների վրա ազդեցության ակնկալիքների և վերը նշված նորմով մեղմվում են նման ռիսկերը:

Անդրադառնալով Ներկայացուցչի դիրքորոշմանն առ այն, որ Հանձնաժողովի կողմից Արսեն Բաղդագյուլյանին վերագրվող առերևույթ իրավախախտման կատարման հանգամանքը բացահայտված է եղել դեռևս 2024 թվականի հունիսի 17-ին, ուստի, սույն իրավախախտման նկատմամբ կիրառելի բոլոր վաղեմության ժամկետները սպառված են՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ 2024 թվականի հունիսի 17-ը չի կարող համարվել իրավախախտման բացահայտման պահ, քանի որ նշված ամսաթվին Հանձնաժողովի կողմից չի ընդունվել իրավախախտման փաստի բացահայտման վերաբերյալ որևէ կոլեգիալ որոշում կամ Հանձնաժողովի կողմից որևէ վարչարարությամբ չի արձանագրվել նման փաստ:

Վերոնշյալի կապակցությամբ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն իրողությունը, որ Կուսակցության կողմից 2024 թվականի հունիսի 17-ին թիվ Մ-2845-2024 գրությամբ ներկայացվել են համապատասխան փաստաթղթեր՝ այդ թվում նաև բանկային հաշիվների քաղվածքներ:

Այսինքն, 2024 թվականի հունիսի 17-ին դեռևս իրականացվել է Կուսակցությունների հաշվետվությունների ստուգման գործընթացը: Ավելին՝ նշված ամսաթվին դեռևս ազդարարվել է ստուգման գործընթացի շրջանակներում ներկայացված փաստաթղթերի և տվյալների համադրության սկիզբը, ինչը նշանակում է, որ ստուգման գործընթացի ելքը դեռևս կանխորոշված լինել չէր կարող: Այլ կերպ ասած՝ նշված փուլում դեռևս չէր կարող բացահայտված համարվել որևէ խախտում: Ավելին, նշված փուլի արդյունքում

գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ Կուսակցության կողմից ներկայացված տվյալներով բացառվի հետագայում որևէ խախտման արձանագրումը Հանձնաժողովի կողմից:

2024 թվականի հունիսի 17-ի դրությամբ ոչ միայն Հանձնաժողովի համար չէր կարող բացահայտված համարվել իրավախախտման փաստը, այլև «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հաշվետվությամբ Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանման կողմից իրականացված ստուգմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունն առերևույթ իրավախախտում համարելու, առավել ևս՝ բացահայտված համարվելու համար Հանձնաժողովի կոլեգիալ կազմին առհասարակ ներկայացված չեն եղել Կուսակցության ստուգման արդյունքները, քանի որ ստուգման արդյունքներ անգամ առկա չեն եղել, և չէին կարող լինել՝ հաշվի առնելով, որ նշված ամսաթվին դեռևս միայն Կուսկացության կողմից ներկայացվել են հարցմամբ պահանջվող տվյալներ: Ստուգումը եզրափակվել է և դրա արդյունքները Հանձնաժողովին են ներկայացվել միայն 13.09.2024 թվականին, ինչը նշանակում է, որ Հանձնաժողովի կոլեգիալ կազմի համար դրան նախորդող ժամանակահատվածում չէր կարող բացահայտված լինել որևէ խախտում:

Տվյալ դեպքում, 2024 թվականի հունիսի 17-ի դրությամբ Հանձնաժողովի կողմից հայտնաբերված չի եղել որևէ առերևույթ իրավախախտում, այլ անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացությամբ արձանագրված են եղել միմիայն անհամապատասխանություններ, **ինչը դեռևս հիմք չէ Հանձնաժողովի համար Կուսակցության կողմից կատարված առերևույթ իրավախախտման փաստը բացահայտված համարելու համար:**

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ մի շարք անհրաժեշտ փաստաթղթերի**, այդ թվում նաև՝ կուսակցությունների կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում միայն, և ստուգման գործընթացի ավարտից հետո, Հանձնաժողովի կոլեգիալ կազմին ստուգման արդյունքները ներկայացնելուց հետո Հանձնաժողովը կոլեգիալ կազմով կարող է բացահայտված համարել որևէ առերևույթ իրավախախտում:**

Հանձնաժողովը հաշվետվության ստուգման գործընթացում տեղեկատվության հայցումը Կուսակցությանը իրականացնում է հավաստվելու համար, որ կուսակցությունների հաշվետվություններն ամբողջական են և հավաստի: Իսկ այն դեպքում, երբ տեղեկատվության հայցումից հետո տրամադրված փաստաթղթերի համապատասխան ուսումնասիրությունների արդյունքում Հանձնաժողովը գալիս է հետևության, որ հաշվետվությունը Սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխան ներկայացված չէ, կամ դրանում առկա է առերևույթ վարչական իրավախախտում, ապա այդ ժամանակ, այսինքն՝ **բացահայտման պահից, հարուցում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ, ինչպես և իմպերատիվ կերպով ամրագրված է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.1-ին հոդվածի 9-րդ մասում:**

Տվյալ դեպքում, օրենսդրական նորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ իրավախախտման բացահայտման պահը հաջորդում է կուսակցությունների կողմից տրամադրված տեղեկատվության և այլ փաստաթղթերի համադրման, ուսումնասիրության, ստուգման փուլին:

Ակնհայտ է նաև, որ **քանի դեռ ստուգումը չի եզրափակվել, Հանձնաժողովի կողմից չի կարող բացահայտված համարվել պատասխանատու սուբյեկտի կողմից դրսևորված հակաիրավական վարքագիծը**: Այսինքն, ստուգման գործընթացը Հանձնաժողովին **վերապահված այն անհրաժեշտ գործիքակազմն է, որի արդյունքներով հայտնաբերվում են խախտումները:**

Տվյալ դեպքում, Աուդիտորական եզրակացությունը տրվել է 2024 թվականի մայիսի 30-ին, որից հետո Հանձնաժողովը, Կուսակցության տարեկան հաշվետվության ստուգման շրջանակներում 2024 թվականի հունիսի 10-ի թիվ 01/1850-2024 գրությամբ Կուսակցությունից պահանջել է անհրաժեշտ փաստաթղթեր՝ հաշվետվության ստուգման համար, որին ի պատասխան Կուսակցության կողմից 2024 թվականի հունիսի 17-ին Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացվել է պահանջված անհրաժեշտ տեղեկատվությունը, որից հետո Կուսակցության հաշվետվությանն առնչվող բոլոր փաստաթղթերի ստուգման գործընթացը ավարտելուց հետո Հանձնաժողովի

համապատասխան ստորաբաժանման (Հանձնաժողովի Հայտարարագրերի վերլուծության վարչության) ղեկավարը Հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 13-ի նիստով Հանձնաժողովի անդամներին է ներկայացրել Կուսակցության հաշվետվության ստուգման արդյունքները:

Նույն՝ 2024 թվականի սեպտեմբերի 13-ի նիստով Հանձնաժողովը՝ կոլեգիալ կազմով, բացահայտել և արձանագրել է, որ առկա են վարչական իրավախախտման առերևույթ հատկանիշներ և որոշել է հարուցել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներ:

Այսինքն, առերույթ վարչական իրավախախտումը Հանձնաժողովի կողմից բացահայտվել է 2024 թվականի սեպտեմբերի 13-ին, և նույն ամսաթվին էլ Հանձնաժողովն իրականացված քննարկման արդյունքում որոշել է հարուցել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.1-ին հոդվածի 9-րդ մասի համաձայն, ինչը նշանակում է, որ Օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված երկամսյա վաղեմության ժամկետը պետք է հաշվարկել առերևույթ իրավախախտման բացահայտման պահից, այսինքն՝ 2024 թվականի սեպտեմբերի 13-ից, որի պարագայում երկամսյա ժամկետը ավարտվում է 2024 թվականի նոյեմբերի 13-ին:

Ինչ վերաբերում է ներկայացված մեկ այլ փաստարկին առ այն, որ առավել նպատակահարմար կլիներ Կուսակցությունների կողմից ներկայացված հաշվետվությունների ստուգման գործընթացը հանձնարարել որևէ հաշվապահական փորձաքննություն իրականացնող մասնագիտացված կազմակերպության՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշել, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի՝ Հանձնաժողովի լիազորությունները սահմանող 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը ստուգում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանումը և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը:

Վերոնշյալից հետևում է, որ օրենսդրությամբ Հանձնաժողովին է վերապահված քննարկվող գործընթացն իրականացնելու լիազորությունը և որևէ այլ կազմակերպության դրա իրականացումը պատվիրելու անհրաժեշտություն առկա չէ: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ Հանձնաժողովը քննարկում և գնահատում է ներկայացված տվյալները և որոշում է կայացնում, այլ ոչ թե իրականացնում հաշվարկներ:

Անդրադառնալով Ներկայացուցչի կողմից՝ Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման կատարման փաստը վկայող ուղիղ ապացույցի առկայության առնչությամբ ներկայացված փաստարկին՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ Ընկերության անունից Կուսակցությանը որպես նվիրատվություն 700.000 ՀՀ դրամի չափով գումարի փոխանցման փաստը հավաստվում է Կուսակցության կողմից տարեկան հաշվետվության ստուգման գործընթացի շրջանակներում ներկայացված բանկային քաղվածքի միջոցով, որը Հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 01/3182-2024 գրությամբ ի թիվս սույն վարույթի այլ նյութերի ներկայացվել է նաև Ներկայացուցչին:

Վերոնշյալի համատեքստում Հանձնաժողովն անդրադառնում է Ներկայացուցչի կողմից վկայակոչված ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշմանը: Նշված որոշմամբ (թիվ ՍՆԴ/1615/04/20 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2022 թվականի որոշում), մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «(…) Բանկի կողմից ներկայացված հաշվի քաղվածքը չի կարող հանդիսանալ պահանջը հիմնավորող ապացույց, քանի որ **այն չի համապատասխանում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթներին**, մասնավորապես, (…) հաշվի քաղվածքում առկա չեն վարկի մնացորդի, տոկոսների և տույժերի վերաբերյալ համապատասխան հաշվարկներ, ուստի նշված ապացույցի հետազոտման արդյունքում Դատարանը չէր կարող պարզել, թե ինչպես են հաշվարկվել և ձևավորվել «վարկի մնացորդը», «հաշվարկված տոկոսները», «հաշվարկված ժամկետանց գումարի տոկոսները», «ժամկետանց գումարի տույժը», «ժամկետանց տոկոսի տույժը»», «(…) Բանկի կողմից ներկայացված հաշվից քաղվածքը բավարար ապացույց չի կարող հանդիսանալ

պահանջի չափը հիմնավորելու տեսանկյունից, այն հստակ և որոշակի չէ, դրանում բացակայում են համապատասխան հաշվարկները պահանջի չափի վերաբերյալ, որպիսի պայմաններում Բանկի պահանջը ներկայացված հաշվից քաղվածքի հիման վրա չէր կարող գրանցվել: (...):» Վերոնշյալի առնչությամբ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1270 որոշմանը, որով Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է նաև դատարանների որոշումների հստակություն և կանխատեսելիություն, ինչը թույլ է տալիս իրավահարաբերությունների մասնակիցներին համապատասխան պատկերացում կազմել իրենց վարքագծի հնարավոր հետևանքների մասին: Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթի նպատակը իրավական նորմերի տարատեսակ մեկնաբանությունները և ընկալումները բացառելն է, և նույնանման փաստական հանգամանքների առկայության պայմաններում միանման մոտեցում ցուցաբերելն ապահովելն է:

Նշված որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշման վերլուծությունից ակնհայտ է դառնում այն հանգամանքը, որ սույն գործով Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը քննարկվող վարույթում առկա փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի չէ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ դրանք նույնական չեն, ինչպես նաև տվյալ դեպքում առկա են սնանկության մասին օրենսդրությամբ սահմանված մի շարք առանձնահատկություններ: Միաժամանակ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն, որ տվյալ պարագայում, սնանկության վերաբերյալ գործի շրջանակներում էական փաստական հանգամանք է հանդիսացել այն իրողությունը, որ բանկային հաշվի քաղվածքում չեն արտացոլվում **պահանջի չափի վերաբերյալ տվյալները, որոնք հնարավորություն կտան պարզել**, թե ինչպես են հաշվարկվել և ձևավորվել «վարկի մնացորդը», «հաշվարկված տոկոսները», «հաշվարկված ժամկետանց գումարի տոկոսները», «ժամկետանց գումարի տույժը», «ժամկետանց տոկոսի տույժը»» և տվյալ գործի շրջանակներում մի շարք այլ էական փաստական հանգամանքներ: Մինչդեռ, սույն վարույթի շրջանակներում քննարկվում է Ընկերության կողմից Կուսակցությանը 700.000 ՀՀ դրամի չափով գումարի փոխանցման փաստը: Սույն գործի նյութերում առկա՝

Կուսակցության կողմից ներկայացված բանկային հաշվի քաղվածքն ուղղակի վկայում է դրանում արտացոլված՝ կոնկրետ օրվա դրությամբ, կոնկրետ անձի (տվյալ դեպքում՝ իրավաբանական անձի) կողմից, կոնկրետ նպատակով համապատասխան շահառուին գումարի փոխանցման փաստի մասին:

Վերոնշյալի համատեքստում Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով ամրագրված իրավակարգավորումներին, մասնավորապես՝ վկայակոչված օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:

Միաժամանակ, Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծությունից հետևում է, որ սույն գործում առկա՝ Կուսակցության կողմից 2024 թվականի հունիսի 17-ին Հանձնաժողովին թիվ Մ-2845-2024 պաշտոնական գրությամբ ներկայացված բանկային քաղվածքները ուղղակիորեն վկայում են Ընկերության անունից Կուսակցությանը որպես նվիրատվություն 700.000 ՀՀ դրամի չափով գումարի փոխանցման փաստի մասին և հետևաբար, կարող են ուղիղ և բավարար ապացույց հանդիսանալ վերոնշյալ փաստի առնչությամբ:

Անդրադառնալով Ներկայացուցչի՝ Գևորգ Մանուկյանին սույն գործին մասնակից դարձնելու և լսելու առնչությամբ միջնորդությանը, արձանագրելով, որ սույն պարագայում չի խախտվում վերջինիս լսված լինելու իրավունքը, միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս զուտ արտահայտելու է վարույթի մասնակցի դիրքորոշումը և որևէ նոր տվյալներ և հիմնավորող ապացույցներ չի ներկայացնելու, Հանձնաժողովը մերժեց այն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով: Նշված իրավանորմով պայմանավորված՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև իր կողմից նախկինում կայացված որոշումներին, մասնավորապես՝ չթույլատրված աղբյուրից՝ իրավաբանական անձանց կողմից կուսակցություններին նվիրատվություններ կատարելու հիմքով արձանագրված իրավախախտումների առնչությամբ հարուցված գործերով նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքերը (ՎԻՎ/299/2024, ՎԻՎ/300/2024, ՎԻՎ/301/2024, ՎԻՎ/325/2024), երբ **իրավաբանական անձի անունից Կուսակցությանը կատարված** չթույլատրված նվիրատվության չափը չի գերազանցել Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավախախտումների գործերով նշանակվող տուգանքի նվազագույն չափը՝ **100,000 ՀՀ դրամը:** Վերոնշյալ էական հանգամանքի հաշվառմամբ, Հանձնաժողովն արձանագրել է, որ վկայակոչված գործերով դրսևորված իրավախախտումն այնպիսի հանրային վտանգավորություն չի ներկայացրել, որի արդյունքում էական վնաս կպատճառվեր իրավաբանական անձանց կողմից կուսակցություններին նվիրատվություններ կատարելու բացարձակ արգելք սահմանող պահանջները կանոնակարգող իրավահարաբերություններին և կխաթարվեր իրավաբանական անձանց կողմից կուսակցություններին իրականացվող նվիրատվությունների միջոցով վերջիններիս նկատմամբ հնարավոր ազդեցության չեզոքացումը կանխարգելելու կամ բացառելու օրենսդրի իրավաչափ նպատակը:

Ամփոփելով վերոնշյալը, սույն գործով խախտման (արարքի) որակական կողմը գնահատելիս **Հանձնաժողովն էական է համարում այն հանգամանքը, որ Ընկերության անունից Կուսակցությանը կատարված նվիրատվության չափը գերազանցում է 100,000 ՀՀ դրամը**, ուստի Հանձնաժողովը հաստատված է համարում, որ սույն գործով 700.000 ՀՀ դրամի չափով նվիրատվություն կատարելու արարքով, այն է՝ Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտմամբ, խաթարվել է նշված

նորմով Օրենսդրի կողմից հետապնդվող նպատակն ու նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը:

Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ հակառակ պարագայում, մասնավորապես՝ **100,000 ՀՀ դրամը** գերազանցող գումարի չափով չթույլատրված նվիրատվությունը նվազ նշանակության որակելու և գործի վարույթը կարճելու դեպքում, քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող դրույթներով սահմանված զանցանքը փաստացի առոչինչ կհամարվեր, հետևաբար նշված զանցակազմն առհասարակ գոյություն ունենալ չէր կարող: Նշված զանցանքի հիմքով վարչական պատասխանատվություն սահմանող օրենսդրական կարգավորումների վերաբերյալ Հանձնաժողովն ունի համապատասխան դիրքորոշում առ այն, որ թեև կուսակցության կողմից չթույլատրելի աղբյուրից նվիրատվություն ընդունելու պարագայում նույնպես սահմանված է պատասխանատվություն, այնուամենայնիվ կուսակցությունը ինքնին, ի սկզբանե, չպետք է ընդունի չթույլատրելի նվիրատվությունը, որիպիսի հանգամանքի հաշվառմամբ Հանձնաժողովի կողմից օրենսդրական նախաձեռնությունների շրջանակներում բարձրացվել է քննարկվող կարգավորումների սահմանման և կիրառման նպատակահարմարության հարցը: Ուստի, որպես նշված օրենսդրական կարգավորումները կիրառող մարմին Հանձնաժողովը սահմանել է արարքը նվազ նշանակության որակելու չափանիշներ, որոնցից մեկը, տվյալ պարագայում, հանդիսանում է որպես նվիրատվություն փոխանցված գումարի չափը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Հանձնաժողովը հաստատված է համարում, որ սույն գործով կատարված արարքով, այն է՝ Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտմամբ, խաթարվել է նշված նորմով Օրենսդրի կողմից վերը նշված հետապնդվող նպատակը, քանի որ իրավաբանական անձի անունից կատարվող նվիրատվության արդյունքում չեն պահպանվել Կուսակցությանն օրենքով չթույլատրված նվիրատվություններ կատարելուն ներկայացվող պահանջները:

Վերոշարադրյալի արդյունքում սույն գործով իրավաբանական անձի կողմից խախտվել է Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի պահանջը՝ իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելու առնչությամբ, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը:

Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ:

Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գրանցամատյանում առկա տեղեկատվության համաձայն՝ Արսեն Բաղդագյուլյանը հաշվետու ժամանակահատվածում հանդիսացել է Ընկերության տնօրեն:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Արսեն Բաղդագյուլյանը՝ որպես Օրենսգրքի 14-րդ հոդվածով նախատեսված պաշտոնատար անձ ենթակա է պատասխանատվության Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար նախատեսված է իրավաբանական անձի անունից կուսակցությանը կատարված նվիրատվության գումարի չափով տուգանքի նշանակում,

սույն դեպքում Հանձնաժողովն արձանագրում է, որ Կուսակցությանը կատարված նվիրատվության գումարի չափը կազմում է 700,000 **(յոթ հարյուր հազար)** ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԲԱՍ ՎՈՅԱԺ» ՍՊ Ընկերության անունից «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը նվիրատվություն կատարելու համար Ընկերության տնօրեն Արսեն Բաղդագյուլյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ նվիրատվության գումարի չափով՝ **700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:**

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:p

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արսեն Բաղդագյուլյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**